

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան»
մատենադարանի փնթեկ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ**



այ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանի, եւ ՀՀ մշակույթի նախարարութիւնը՝ ի դեմս Հայաստանի ազգային գրադարանի, եղել եւ մնում են հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային գանձարանը հարստացնող համազգային կառույցների տպագիր գրականութեան պահպանները: Ասվածի վառ վկայութիւնն է այն, որ հայ գրատպութեան սկզբնավորման 500-ամյակին ընդառաջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ, Մայր Աթոռի, ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի «Գրիգոր եւ Կլարա Զոհրապ» տեղեկատվական կենտրոնի եւ ՀՀ մշակույթի նախարարութեան գործակցութեամբ 2009 թ. (օգոստոսի 25-27-ը) Մայր Աթոռում տեղի ունեցավ հայկական գրադարանների միջազգային առաջին համագումարը, որին հետեւեցին երկրորդը (2012 թ. հոկտեմբերի 5-7-ը) եւ երրորդը (2014 թ. հոկտեմբերի 6-7-ը): Այս համաժողովների նպատակն էր աջակցել հայագիտական կենտրոններին, գրադարաններին՝ հայ տպագիր ժառանգութեան հաշվառման գործում եւ շարունակաբար հոգ տանել այդ ժառանգութեան հանրայնացման ու երկարաժամկետ պահպանութեան մասին:

2016 թ. հոկտեմբերի 17-18-ին տեղի ունեցավ չորրորդ համաժողովը, որը նվիրված էր հայերեն Աստվածաշնչի տպագրութեան 350-ամյակին: Համաժողովի բացմանը ներկա էին եւ օրհնութեան ու ողջույնի խոսք ասացին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրջանը:

Երկօրյա համաժողովի ընթացքում օգտաշատ գեկուցումներով հանդես եկան Տ. Արարատ քհն. Պողոսյանը՝ «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությունը գրադարանային ոլորտում. Սուրբ Էջմիածնի Մատենադարանը՝ իրագործող եւ համակարգող», Ներսես Տեր-Վարդանյանը՝ «Հայաստանի Հանրապետության գրադարանային ոլորտի մշակութային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները», Տիգրան Զարգարյանը՝ «Հայագիտական նյութերի թվայնացման եւ գրադարանավարների վերապատրաստման ուղղությամբ Հայաստանի գրադարաններում կատարվող աշխատանքների արդի վիճակը», Հ. Համազասպ Քեչիչյանը՝ «Մայրավանքի գրադարանի ցանկագրման ու թվայնացման ծրագիրն ու ընթացքը», Գեորգ Տեր-Վարդանյանը՝ «Հայերեն հնատիպ գրքերի ցուցակի (մատենագիտության) վերամշակման եւ վերահրատարակության խնդիրը», Հ. Ժիրայր Տաչչյանը՝ «Փարիզի Մայր եկեղեցու գրադարանի հավաքածուների ներկայացում», Աննա Մարիա Մատտաարը՝ «Ամստերդամի համալսարանի գրադարանի հայկական հնատիպ գրքերը», Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանը՝ «Հայ մատենագիտության անձանոթ երկու հրատարակություններ», Վաղարշակ սրկ. Սերոբյանը՝ «Պոլսի հայ տպագրության նորահայտ էջեր», Կարապետ Մինասյանը՝ «Հիմնարար գիտական գրադարանի թվային շտեմարանները», Լալազե Թահմազյանը՝ «Ս. Ներսես Շնորհալի» գրադարանի էլեկտրոնային շտեմարանի ստեղծումն ու զարգացման հեռանկարը», Հայկանուշ Ղազարյանը՝ «Հայ պարբերական մամուլի համահավաք շտեմարանը», Տ. Հեթում քհն. Թարվերդյանը՝ «Հայկական տպագրությունը եւ մամուլը Ռումինիայում», Պորիս Աճեմյանը՝ «Նուբարյան գրադարանի մամուլի հավաքածուն եւ թվայնացման ծրագիրները», Սոնյա Սիսլյանը՝ «Հայ պարբերական մամուլն ու Հայկազյան համալսարանը», Հ. Մովսես վրդ. Տոնանյանը՝ «Զմամուրի վանքի 2014-2016 թթ. կատարած գրադարանային գործընթացը», Անահիտ Թարխանյանը՝ «Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության մատենադարանի աշխատանքների ներկայացում» թեմաներով:

ՀՀ ազգային գրադարանը ձեռավորել է գեղեցիկ ավանդույթ՝ հայ գրքի ուսումնասիրման, քարոզչության եւ գրադարանային գործում ունեցած ներդրման համար «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով պարգևատրել համաժողովի որոշ մասնակիցների: Այս տարի ՀՀ ազգային գրադարանի տնօրինության որոշմամբ՝ հուշամեդալներով պարգևատրվեցին Ս. Էջմիածնի մատենադարանի տնօրեն Տ. Արարատ քհն. Պողոսյանը, Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Վահան Հովա-

կիմյանը, Կ. Պոլսի Հայոց պատրիարքության հրատարակչական բաժնի եւ թանգարանի վարիչ Վաղարշակ սրկ. Սերոբյանը եւ ՄՄ գլխավոր ավանդապահ Գեւորգ Տեր-Վարդանյանը:

Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովն ընդունեց հայեցակարգ, որը ներկայացնում ենք ստորեւ:

ՀԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակի առիթով 2009 թվականի օգոստոսի 25-27-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ հայկական գրադարանների միջազգային առաջին համագումարը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ: Առաջին համաժողովին մասնակցեցին նաեւ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Մայր Աթոռի եւ ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի «Գրիգոր եւ Կլարա Զոհրապ» տեղեկատվական կենտրոնի նախաձեռնությամբ հրավիրված համաժողովին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա.» հայագիտական-աստվածաբանական կենտրոնի, Երեւանի Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, Հայաստանի ազգային արխիվի, ՀՀ ԳԱԱ-ի հիմնարար գրադարանի, ԵՊՀ-ի գրադարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի գրադարանի, Եղիշե Զարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի հայագիտական գրադարանի, Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի, Հանրապետական գիտաթղթական գրադարանի, Հայաստանի Խնկո-Ապոլո անվան ազգային մանկական գրադարանի, Հայաստանի ազգային գրապալատի, Երաժշտագիտական գրադարանի, Հայաստանի մարզային գրադարանների, ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան գրադարանի, Մշակութային արժեքների պահպանության գործակալության աշխատակիցներ, ինչպես նաեւ ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, Երուսաղեմի Հայոց պատրիարքությունից, Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունից, Զմմառի Հայ Կաթողիկե Արժիվյան միաբանությունից, Վենետիկի Մխիթարյան միաբանությունից, Վիեննայի Մխիթարյան միաբանությունից, Հարվարդի

Համալսարանից (*Widener Library Middle East Division*), Միջիգանի Համալսարանից (ԱՄՆ), Կալիֆորնիայի Համալսարանից (ԱՄՆ, Ֆրեզնո), ՀԲԸՄ Նուբարյան գրադարանից (Ֆրանսիա, Փարիզ), Բրիտանական գրադարանից (Մեծ Բրիտանիա), «Գրիգոր եւ Կլարա Զոհրապ» տեղեկատվական կենտրոնից (ԱՄՆ), Ամերիկայի Հայկական գրադարանից եւ թանգարանից (ԱՄՆ), Հայկական հետազոտությունների ազգային ընկերակցությունից (ԱՄՆ), Ֆրանսիայի Ազգային գրադարանից, Հայկական մշակութային միությունից (ԱՄՆ), Ռուսաստանի ազգային գրադարանից եւ Ս. Ներսես ճեմարանից (ԱՄՆ):

Եռօրյա քննարկումների ընթացքում լսվեցին մասնակից գրադարանների ու Հաստատությունների հաղորդումները եւ թեմատիկ զեկուցումները: Քննարկվեց հարցերի լայն շրջանակ՝ տեղեկատվության եւ նյութերի փոխանակության, գրադարանների հավաքածուների էլեկտրոնային քարտազրման, թվայնացման եւ պահպանման, Հայաստանի գրադարանների ներկա վիճակի, Հայագիտական գրադարանների միջեւ համագործակցության վերաբերյալ եւ այլ հիմնախնդիրներ:

2012 թվականի հոկտեմբերի 5-7-ը կայացավ Հայկական գրադարանների միջազգային երկրորդ համաժողովը. լիագումար նիստերի եւ քննարկումների ընթացքում վեր հանվեցին գրքափոխանակության կազմակերպման խնդիրները հայագիտական հաստատությունների եւ գրադարանների միջեւ, հայ հնատիպ գրքի, հայ պարբերական մամուլի երկարաժամկետ պահպանության հարցերը, այդ հավաքածուների թվայնացման եւ համացանցում դրանք հասանելի դարձնելու անհրաժեշտությունը: Քննարկման առանձին թեմա դարձավ «Լքյալ գրադարանների» հարցը:

Համաժողովի նյութերը եւ բանաձեւը հասանելի են <http://www.flib.sci.am/arm/archive/image/conf.html> հասցեից:

2014 թվականի հոկտեմբերի 6-7-ը կայացավ Հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովը. նյութերը եւ համաժողովի բանաձեւը հասանելի են <http://www.flib.sci.am/arm/archive/image/conf.html> հասցեից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայկական գրադարանների միջազգային համաժողովի մշտական կազմակերպիչներն են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ ի դեմս «Վաչե եւ

Թամար Մանուկյան» մատենադարանի, եւ ՀՀ մշակույթի նախարարութիւնը՝ ի դեմս Հայաստանի ազգային գրադարանի:

Համաժողովի մասնակիցներն են Հայաստանի գրադարանային եւ տեղեկատվական գիտութիւնների մասնագետները, գործնական աշխատանքի փորձ ունեցող գրադարանավարները, հայագետները, գրադարանային գործի կազմակերպիչները, արտերկրի գրադարաններում աշխատող հայ մասնագետները, հայ եկեղեցիներին կից գործող գրադարանների, դպրատների ներկայացուցիչները, հոգեւորականները:

Համաժողովի նշանաբանն է՝ «Անցյալի պահպանութիւնն հանուն ապագայի»:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաժողովի առաքելութիւնն է հայագիտական կենտրոնների միջեւ գրքափոխանակութեան կազմակերպման գործին աջակցելը, աշխարհով մեկ սփռված հայագիտական կենտրոններին օգնելը՝ համակարգելու իրենց ուժերը հայկական տպագիր ժառանգութեան հայտնաբերման, հաշվառման եւ գրացուցակավորման գործում, այդ ժառանգութեան հանրայնացման ու երկարաժամկետ պահպանութեան ուղղութեամբ շարունակաբար հոգ տանելը:

Համաժողովի նպատակն է գրադարանային գործի առաջընթացն ապահովելու, ժամանակակից մարտահրավերների պայմաններում գրադարանների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու խնդրով մեկ սեղանի շուրջ հավաքվելը եւ աշխարհասփյուռ հայ տպագիր ժառանգութեան անխաթար պահպանութեան ու այն գալիք սերունդներին հանձնելու շուրջ համատեղ որոշումներ կայացնելը:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

ա. Կազմակերպել եւ անցկացնել քննարկումներ հայագիտական կենտրոնների եւ գրադարանների միջեւ գրքափոխանակութեան կազմակերպման հարցերի շուրջ.

բ. Աջակցել հայագիտական հավաքածուների երկարաժամկետ պահպանութեան խնդիրների լուծմանը.

գ. Աշխարհի տարբեր վայրերում քարոզչական գործունեութիւնն ծավալել՝ ներկայացնելով հայ գրքի անցած ուղին, հայկական գրատպութեան պատմութիւնը եւ արդի վիճակը.

դ. Հետազոտել արտերկրի գրադարաններում պահվող հայ տպագիր նյութերի քարտարանները եւ նոր նյութերի հայտնաբերման մասին տեղյակ պահել Հայաստանի ազգային գրադարանին.

ե. Խթանել հայ գրադարանավարների մասնակցությունը թվայնացման տարաբնույթ աշխատանքներին.

զ. Ներգրավել երիտասարդներին հայ ժողովրդի՝ դարերով ստեղծած տպագիր ժառանգության արժեւորման, պահպանության եւ տարածման գործընթացներում.

է. Աջակցել միջազգային գրադարանագիտական կազմակերպությունների հետ համագործակցությանը:

ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ

Հայկական գրադարանների միջազգային համաժողովը հրավիրվում է երկամյա պարբերականությամբ՝ Գրադարանավարի օրը (հոկտեմբերի 7) կամ Սրբոց Թարգմանչաց տոնին (հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը):

Համաժողովի տեւողությունն է երկու օր: Առաջին օրվա քննարկումները կայանում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանում, իսկ երկրորդ օրվա քննարկումները՝ Հայաստանի ազգային գրադարանում: Համաժողովը ընտրում է գործադիր մարմին, որի հիմնական գործառույթն ընթացիկ հարցերի լուծումն է: Գործադիր մարմինն ընտրվում է երկու տարի ժամկետով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովը կայացավ 2016 թ. հոկտեմբերի 17-19-ը Մայր Աթոռում եւ Հայաստանի ազգային գրադարանում:

Համաժողովը նվիրված էր հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 350-ամյակին: Համաժողովի օրերի տեղափոխությունը պայմանավորված էր հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 350-ամյակին նվիրված եւ հոկտեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում անցկացվող գիտաժողովներով:

Համաժողովն արձանագրեց այն նոր ձեռքբերումները, որոնք տեղի են ունեցել հայկական գրադարանների երրորդ համաժողովից հետո: Արձանագրեց, որ մատենագիտական շտեմարանների ձեւավորման եւ գրա-

դարանային հավաքածուների թվայնացման ուղղությամբ կատարվել են նշանակալի աշխատանքներ: Զեւավորվել են.

ա. «Հայ գիրք» շտեմարանը:

բ. Հայաստանի գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակը:

գ. Հայագիտական հետազոտությունների գիտատեղեկատվական հանգույցը:

դ. «Հայ մամուլի համահավաք գրացուցակը»:

Երկօրյա համաժողովի մասնակիցները ձեւավորեցին նոր գործադիր մարմին հետեւյալ կազմով.

Աճեմյան Բորիս - ՀԲԸՄ Նուբարյան գրադարանի տնօրեն.

Զարգարյան Տիգրան - Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն.

Թահմազյան Լալագե - Սպահանի Հայոց թեմի Ս. Ամենափրկիչ վանքի «Ս. Ներսես Շնորհալի» գրադարանի գրադարանավարի օգնական.

Տ. Վահան վրդ. Հովակիմյան - Վիեննայի Մխիթարյան միաբանություն.

Ղազարյան Հայկանուշ - Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն.

Մինասյան Կարապետ - ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրենի պաշտոնակատար.

Տ. Ներսես ավ. քին. Ներսեսյան - Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի Հայոց թեմի հոգեւորական.

Տ. Արարատ քին. Պողոսյան - Ս. Էջմիածնի Մատենադարանի տնօրեն.

Վաղարշակ սրկ. Սերոբյան - Կ. Պոլսի Հայոց պատրիարքության ներկայացուցիչ.

Սիսյան Սոնյա - Բեյրութի հայկազյան համալսարանի Պարսոմյան եւ Տերյան հայագիտական գրադարանների տնօրեն.

Տ. Ժիրայր ծ. վրդ. Տաշյան - Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցու գրադարանի պատասխանատու.

Տեր-Վարդանյան Գեորգ - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, Զեւագրագիտության եւ Մայր ցուցակի բաժնի վարիչ:

Տ. Մովսես վրդ. Տոնանյան - Զմմառի Փոխյալ Սուրբ Կոլյսի վանքի մատենադարանավետ.

Տ. Տիրայր արք. Փանոսյան - Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մատենադարանավետ.

Տ. Համազասպ վրդ. Քեչիշյան - Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանավետի օգնական:



Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովի բացումը Մայր Աթոռում



Հայկական գրադարանների
միջազգային չորրորդ համաժողովի
բացումը Մայր Աթոռում



Քննարկումների արդյունքում արվեցին առաջարկներ, որոնք արժանացան համաժողովի մասնակիցների հավանությունը: Ստորեւ ներկայացնում ենք դրանք.

ա. «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» գրքի հրատարակությունից հետո անցել է շուրջ 30 տարի: Հայաստանում տեղի են ունեցել սոցիալ-քաղաքական հսկայական փոփոխություններ: Հարկ է վերաիմաստավորել «Հայ գրքի» հնատիպ շրջանի մատենագիտական նկարագրությունների ցանկերը, դրանք մոտեցնել հայ գրքի հնատիպ շրջանի լեզվամտածողության պահանջներին, ինչպես նաեւ հարկ է մատենագիտական նկարագրությունները կատարել՝ հիմք ընդունելով նյութի նկարագրության միջազգային ստանդարտը: Ուստի հարկավոր է ձեւավորել աշխատանքային խումբ, որը ձեռնամուխ կլինի «Հայ գրքի» հնատիպ շրջանի մատենագիտական նկարագրությունների իրականացման հայեցակարգի ձեւավորմանը, ժամանակացույցի կազմմանը, աշխատանքների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների հաշվարկմանը եւ մասնագիտական խմբի անդամներին առաջադրվող պահանջների նկարագրմանը.

բ. Հայ գրքի մասնագետների շրջանում սկսել քննարկումներ հայ հնատիպ գրքի հաշվարկման ներկա ժամանակահատվածը, այն է՝ 1512-1800 թթ., փոփոխելով դարձնելով այն մինչեւ 1850 թվականը.

գ. Համագործակցել «Վիքիմեդիա-Հայաստան» հիմնադրամի հետ՝ համայնքային գրադարանները դարձնելով հենակետային Վիքիպեդիայի ձեւավորման աշխատանքներում.

դ. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայ Եկեղեցու թեմերում նվիրապետական աթոռներին կից ստեղծված գրադարաններում, գիտական կենտրոններում եւ մշակութային տներում առկա հավաքածուներում կան բազմաթիվ հնատիպ եւ վաղ շրջանի գրքեր եւ մամուլ, որոնք եզակի են, դիմել Հայ Եկեղեցու նվիրապետական աթոռների աթոռակալներին, թեմերի եւ միաբանությունների առաջնորդներին՝ թվայնացնելու համաշխարհային մշակույթի եզակի նմուշներ հանդիսացող այդ հրատարակությունները եւ տրամադրելու դրանց թվային պատճենները Հայաստանի ազգային գրադարանին եւ Սուրբ Էջմիածնի մատենադարանին.

ե. Կոչ անել Սփյուռքի հայագիտական կենտրոններին՝ տրամադրելու իրենց հայատառ հավաքածուների լրամշակված ցանկերը Հայաստանի ազգային գրադարանին եւ Սուրբ Էջմիածնի մատենադարանին.

է. Սփյուռքի տարբեր գաղթօջախներում առկա եւ խնամքի ու հաշվառման կարիք ունեցող հավաքածուների մատենագիտական նկարագ-

րություններն իրականացնելու եղանակներ փնտրել՝ օգտագործելով նաեւ դիվանագիտական ուղիները.

ը. Աշխատանքներ տանել Սփյուռքում առկա լքյալ եւ վտանգված գրադարանային հավաքածուները Հայաստան տեղափոխելու ուղղութեամբ.

թ. Ստեղծել հիմնադրամ լքյալ եւ վտանգված գրադարանների հավաքածուների Հայաստան տեղափոխման համար.

ժ. Հայաստանի ազգային գրադարանի հիմքի վրա կազմակերպել հնգօրյա վերապատրաստման դասընթացներ Սփյուռքի հայագիտական կենտրոնների գրադարանավարների համար՝ գրադարանավարների ճանապարհածախսի եւ կեցութեան համար դրամական միջոցների առկայութեան պարագայում:

